չէնքեր եղած պիտի ըլլան։ Հոն էր նաև Օգոստոս կայսեր կնկան Լիւիայի ամարաստունը։

Այն բարձրութենէն մարդուս աչքը չորս դին գեղեցիկ տեսարանաց շարքը կը դիտէ. մէկ կողմանէ Ետրուրական բլուրները և Սորակտէն կը տեսնայ, որ ժեռուտ և միայնիկ իբրև ծովու մէջ կղզի մը՝ անանկ հորիզոնէն վեր կ՚ամբառնայ. յետոյ բոլոր շրջակայ չքնաղ և երփնազարդ տեսարանը իր ապշութիւնը կը գրաւէ, Սաբինեան լեռները, Ալպանոյ լեռը կը տեսնայ, և Տիբեր գետին ուղղութիւնը բռնելով մինչև Հռովմայ շրջակայ դաշտաց վրայ տեսութիւնը կը պտըտցնէ բաղում և վայելչագեղ հրաշալեաց ականատես ըլլալով, զորոնք գրչով նկարելը անկարելի է, թերևս վրձինը կարենայ ոգորիլ բնութեան կերպարանքը գողնալու։ 1863, ապրիլ 24ին նոյն տեղերս փորելով Օգոստոսի մէկ արձանը գտնուեցաւ, որ մինչև օրերս գտնուած և պահուած արձանաց առաջին գեղեցիկներէն կը համարուի, և արդ Վատիկանի զարդերէն մէկն է։ Անկէ քիչ հեռու սենեակներ գտնուեցան գունագեղ նկարուք զարդարեալ, որոնց զովութեան մէջ Լիւիա ամառուան տաքերը կը մեղմէր։ Մեր հոս ընծայած տեսարանը նկարեալ պատի մը կէսը կը ներկայացնէ՝ որ կրնայ պզտի գաղափար մը տալ ան ատենուան սովոր եղած զարդերուն, որ էին դիւցից և պարտիզաց տեսարաններ։

ՄԷՆՉԸՍԴԸՐ ԵՒ ԼԻՎԸՐԲՈՒԼ

Հալլինկտըն, Ռոչտէլ, Պիւրի, Պոլդըն, Օլտհէմ, Աշդըն–Բրոս, Սդէլի–Պրիճ, այս ամենայն քաղաքներս՝ յարակիցք կամ արուարձանք են Մէնչըսդըր մեծ քաղաքին, որ է Թագուհի Միացեալ Թագաւորութեան (Անգղիոյ) ճարտարարուեստից, և հաւանաբար բոլոր աշխարհիս։ Ըրքի և Մէտլըյի գետախառնունքի քով, Այրուէլ գետոյն վրայ կանգնուած է, և ունի 310,000 բնակիչ։ Անցեալ դարուն մէջ 20,000էն աւելի չունէր, և 1800ին՝ 80,000 միայն։ Բամբակեայ հիւսուածոց գործարանաց կեդրոնն է, որոնք 5000 շոգեշարժ մեքենայ և 30,000 հիւսելու գործիք ունին, որոնցմէ 6,000ը շոգիով կը շարժին։ Անգղիոյ մէջ պատրաստուած բամբակին հինգին չորսը ինքը կը հայթհայթէ, մուսլին, բամբակախառն կտաւ, տեսակ տեսակ լաթեր (percale, piqué) թաւիշ և ուրիշ կերպասներ, որոնք միջին հաշուով չորս միլիոն մեդրական կենդինար բամբակ կը գործածեն։ Նմանապէս մետաքսեղէն, բրդեղէն կտաւներ, օթոցներ, գլխարկներ, քիմիական արգասիքներ, մեքենաներ կը շինեն հոն. և քաղաքը ձուլարաններով, թափիչներու արուեստանոցներով, գրոց տպարաններով և հալոցներով պատուած է։ Իր յաջողութեանը պատճառ եղած են Հարկրէյվզ, Արքրայթ, Գրեմբդըն, իրենց տուած հիւսուածոյը կատարելագործութեամբը. բայց պարտական է նաև իր նշանաւոր դիրքը, որ բազմաթիւ ճանապարհաց միութեան կէտին վրայ կ՚ինկնայ, ինչպէս են Լիվըրբուլի, Լիտսի, երկաթուղիներն և ուրիշ չորս նման ճամբաներ. յետոյ Այրուէլ և Մըրզէյ գետերու, որոնք Լիվըրբուլը Մէնչըսդըրի նաւահանգիստ կ՚ընեն, յետոյ Պրիճ–վոդըրի ջրանցքին որ ընդ մէջ Մէնչըսդըրի և Աշդընի, Պոլդընի և Պիւրիի ջրանցից, Ռոչտէլի մէջ. այնպէս որ այս ճամբաներով կամ անոնց մօտ եղածներով՝ Անգղիոյ մէջ չկայ կարևոր տեղ մը որ Մէնչըսդըրի հետ հաղորդած չըլլայ ջրով։ Անտոնինեան ճանապարհագրութեան մէջ Մանկունիոն կոչուած հռովմէական կայարանի մը տեղը բռնած է Մէնչըսդըր. վայելուչ շինուած է. նոր թաղերը աւելի կարգաւորեալ են. որոնց մէջ աւելի ընտիրներն են իրենց շինուածքներովը Բօրդլէնդ–Բլէյս և Մոզլի–սդրիդ. 17 եկեղեցի ունի. Քրիստոսի ըսուած եկեղեցին գոթացի գեղե-

ցիկ շինուած մի է, Ս–Մարիամ եկեղեցին որուն զանգակատունը նշանաւոր է, յունական ոճով շինուած է. գլխաւոր եկեղեցին որ կանոնիկոսական կ'ըսուի՝ գոթացի սիրուն շինուած մ'է, ներսի կողմը հարուստ զարդարուած ։ Դրամանոցի ժողովարանն գեղեցիկ և հոյակապ ճակատ մ'ունի. սինադարդ գաւիթն, որ յունական ոճով շինուած է, գրոց թանգարան մը և 20,000 հատոր պարունակող գրատուն մ'ունի. Նոր բանդը, վաճառանոցը, ցորենի համար նոր ակմբանոցը, հասարակաց ժողովարանը. երկու թէատրոնք, երաժշտութեան սրահը, վաճառականական սրահները բնական պատմութեան թանգարանք և առնք ամենը գլխաւոր շէնքերն են։ Մէնչըսդըր շատ մը բարերարութեան և կրթութեան տեղեր ալ ունի ։ Ամենէն կարևորներն են Չիթէմի դպրատունը, որ տեսակմը արուեստից դպրոց է. Լէնքասդրեան թագաւորական դպրոցը, սկզբնական դպրոցները՝ որ ազգային ալ կ'ըսուին, քերականութեան վարժարանը կամ դպրոցը, որուն աշակերտներն Օքսֆըրդի համալսարանը կ'ընդունուին. խուլ և համրներուն վարժատունը, հիւանդանոցն, որ ունի անկելանոց մը, մթերանոց մը և խնոթանոց մը։ Այրուէլ՝ որուն ջուրը ներկի համար շատ աղէկ է, Մէնչըսդըրը Սալֆորտէն կը զատէ. այս վերջինս զատ քաղաք մի է հինգ կամուրջով մեծ քաղքին հետ միացած, որուն արուարձան մը կը թուի. 55,000 բնակիչ ունի և բազմութիւն մը գործարանաց ։ Մէնչըսդըրի մօտ է Սդոնիհըրստ վարժարանը, որ Անգղիոյ մէջ ուղղափառաց ամենէն գեղեցիկ շէնքն է ։

Հիմայ յիշելու քաղաքներս ալ Մէնչըսդըրի կցորդակից կրնան սեպուիլ ։ Լիհ (Leigh) (22,000 բնակ.) մուսլին, բարակ կտաւի (batiste), բամբակեայ կտաւի (calicot), ֆուդէնի, մետաքսէ և բամբակէ կերպասներու արուեստանոցներ ունի ։ կրաքարի և հանքածուխի հանքեր ալ ունի ։ Ուիկէն (Wigan) (21,000) բնակ.) բամբակի, մետաքսեղէնի և հասարակ կտաւուց, պղնձի և անագի գործատուններ և ածղահանքեր ունի, որոնցմէ .քէննըլ–քոլ ածուղը կը հանեն, որ շատ յարգի է. վասն զի վառելու ատեն պղպջակներ չի ձևացներ, և անկէց զարդեր և գործիքներ կրնան շինուիլ։ Իր մօտերը ծծմբաջուր աղբիւր մը կայ ։–Ս–Հեղինէ (12,000 բնակչով), խեցեղէն ամաններու, բևեռագործութեան համար, և մանաւանդ ապակիի և բիւրղի գործարանաց համար շատ անուանի և բանուկ է ։ Ասոր մօտ է Ռէվընհիտ՝ Անգղիոյ ամենէն գլխաւոր ապակիի գործարանն ։— Բրիսքոյ (7000 բնակիչ) հարուստ ածղահանքեր ունի, որոնք Լիվըրբուլ կ'երթան, ժամացոյց, առագաստի կտաւ և հողի ամաններ ։ Ուորինկդոն (25,000 բնակիչ,) Մըրզիի վրայ շինուած, բամբակի, առագաստի կտաւի, և երկաթեղինաց բանուկ արուեստանոցներ ունի ։

Մըրզիի լայնատարր և խոր բերնին քով կանգնած է Անգղիոյ երկրորդ քաղաքն՝ վաճառականութեան կարևորութեանը և բազմամարդութեանը կողմանէ, Լիվըրբուլ, 400,000 բնակչօք, 2282 վաճառական նաւերով, որք 900,000 տակառաչափ կը տանին. որ է ըսել գրեթէ բոլոր Գաղղիոյ վաճառական նաւարկութեան հաւասար ։ Այս քաղաքս 1709ին միայն 84 նաւ ունէր 5 կամ 6,000 տակառաչափ կրելով։ Իր այս արագ յառաջադիմութեան պատճառն է գործարաններ ունեցող մերձակայ քաղաքներն. ինքն է որ Մէնչըսդըրի և մերձակայ քաղաքաց չբանած նիւթ կը մատակարարէ, և անոնց բանած բերքերը դուրս կը տանի ։

Լիվըրբուլ՝ գետին արևելեան եզերքին վրայ կը տարածուի և 8 հազար–մեդր երկայն և 2 հազար–մեդր լայն միջոց մը կը բռնէ իր նաւաշինութեան աւազաններով, նաւարաններով և մթերանոցներով, դէպ արևմուտք կ'երկըննայ ։

Նոր թաղերը, լայն, հովասուն, պայծառ և աղէկ յատակուած են, ազնուաշէն տներով, որոնք արդեւսեան քարով ծածկուած են. բայց հին քաղ-

քին տուներն աղտոտ, փողոցներն նեղ են։ Իր հասարակաց շէնքերը գեղեցիկ են. գլխաւորներէն մէկն է հասարակաց ժողովարանը կորնթեան սիւներով զարդարուած, և գմբէթով մը ծածկուած, որուն վրայ արձան մը կայ՝ որ զՄեծն–Բրիտանիա կը ներկայացընէ, նիզակի մը ծայր աղատութեան նշանը կրելով։ Այս շէնքս եղած հրապարակին մէջ կայ դրամափոխութեան ժողովարանն, մէջ տեղը՝ի պատիւ Նելսընի շքեղ յիշատակարան մը։ Ցիշենք նաև մաքսատունը, մէկ գմբէթով և երեք ճակատով գեղեցիկ շէնք մը. սուրհանդակարանը, ցորենի վաճառատեղին յունական ճարտարապետութեամբ շինուած, նոր վաճառատեղին, երկաթուղւոյ չուարանը և Լիտսի Ջրանցքին գետնամուտը, ծխախոտի համբարանոցն, մեքենայական նոր ուսումնարանն յունական ոճով, որ կը բովանդակէ վայելուչ թէատրոն մը։ Բէմպրոքի հրապարակին վրայ Գէորգ Գ-ին հեծեալ անդրին։ Իր 55 եկեղեցեայ և մատրանց մէջ շատերն կըրնան հոյակապ շէնքերու կարգ անցնիլ։

Բարերարութեան շէնքերն ալ բազմաթիւ են և հարուստ ռոճկոք. մատակարարն տարուէ տարի տանց մէջ 20,000 հոգի դարմանել կու տայ. հիւանդանոցն 1,500 հիւանդ կընդունի, և նոյնչափ անձանց ալ տանց մէջ առատապէս կ'օգնէ։ Քաղաքը ունի լիկէոն մը և ատենէոն, որոնց երկուքն ալ 30,000 հատորով գրատուններ ունին, մէկ որբանոց մը, 75 կիրակուան դպրոցներ, 700 սկզբնական դպրոցներ, թատրական ուսումնարան մը՝ ուր հասարակաց առջև կ'ըլլան ընթերցմունքներ, մաթեմատիքայի և գեղեցիկ դպրութեանց դասեր, և որ ունի նաև բնական պատմութեան թանգարան մը և տնկաբանական պարտէզ մը, գեղարուեստից մուսէոն մը, կենդանաբանական պարտէզներ, ժողովարաններ, թէատրոներ, և այլն։

Նաւահանգիստը որ աշխարհքիս ամենէն ապահով և ընդարձակներէն մէկն է, ունի 22 աւազան կամ՝ նաւակայք, որոնց մակերեսը 446,000 քառակուսի մեդր է, 15 հատն շարժուն աւազաններ են, անոնցմէ մէկը 100 նաւէն աւելի կըրնայ ընդունիլ։ Այս նաւակայներն՝ որ Անգղիոյ մէջ ամենէն առջի շինուածներն են, լայն և դիւրաքայլ սալափներով (quai) և ընդարձակ շտեմարաններով միացած են, 14 հազար–մեդր տարածութեամբ։ Բոլորն ալ գետին կողմանէ 4 հազար–մեդր երկայն ամուրթումբով մը պաշտպանուած են։ Ցովուն կողմանէ ալ ամրոցներ ունի։ 1856-ն այս նաւակայից մէջ 20,886 նաւաց ելումուտ եղաւ, 4,320,000 տակառ կշռելով, և իրենց հասքը՝ մօտ 18 միլիոն ֆրանգ կ'ելլար։ Հոն համբարուած վաճառքներն գլխաւորապէս են բամբակեղէն, ծխախոտ, ներկի փայտեր, և զաղթական երկիրներու վաճառքներ. և այլն։ 1856, Լիվըրբուլի օտարաց հետ վերաբերութիւն ունեցող նաւերն էին 9,212՝ 5,090,000 տակառաչափ կըշռող. իսկ ներքին նաւարկութիւն էին ընող նաւք 19,817՝ 2,829,000 տակառաչափ կրող։ Իր գլխաւոր վաճառականութիւնը Միացեալ–Նահանգաց հետ է. որուն հետ ունեցած վաճառականութեան հինգին չորսը Մըրզիի բերանը կը կեդրոնանայ։ Ուրիշ երկիրները՝ որոնց հետ առուտուր կ'ընէ՝ են Իտալիա, որոյ հետ 40 շոգենաւով կը հաղորդի ամեն օր, Անգլիական կղզիք, Հարաւային Ամերիկա, Գերմանիա, Գաղղիա, արևելեան Հնդկաստան, և այլն։ Անդրատլանտեան մեծամեծ նաւուց երթևեկի գլխաւոր կէտերէն մէկն է։ Կանոնաւորեալ թղթաբերնաւակներով Անգղիոյ գլխաւորնաւահանգիստներուն և ցամաքին հետ հաղորդակցութիւն ունի։ Իսկ Մեծին–Բրիտանիոյ քաղաքներուն ներքին հաղորդակցութեան համար՝ ունի ամեն տեսակ ճամբաներ, ջրանցք և երկաթուղի։ Գլխաւորն է Լիտսին հետ միացնող ջրանցքն, որ քաղաքին մէկ կողմէն անցնող 15 հազար–մեդր երկայնութեամբ սքանչելի գետնամուտ անցքով մը կը սկսի։ Իր բամբակի հանրածուղի, աղի, ծխախո-

տի խեցեղինի ընդարձակ մթերանոց-ները, և իր յատուկ ձեռագործները՝ իր վաճառականթիւնը աւելի կը մեծցը-նեն։

Միայն այս քաղաքս բոլոր Անգղիոյ վաճառականութեան քառորդը կ'ընէ, իր դուրս ղրկած վաճառքները 1856ին հասան 558 միլիոնի։ Ցարին 1,500,000 հակ բամբակ կ'ընդունի։ Լիվերբուլ՝ նաւարկութեան համար շինած զանա-զան նիւթերէն զատ, ունի անուանի վա-ճառանոցներ, որոնք 30 միլիոն հազար-կրամ սապոն կը հայթհայթեն, ինչպէս նաև բամբակեայ ձեռագործներ, բիւ-րեղներ, խեցեղէններ, մեքենաներ, ձու-լարաններ, զարեկրոյ գործատուններ՝ զտարաններ, չուանի մանոցներ, կաղ-մածոց և ժամացոյցներու գործատուն-ներ ալ ունի. և այլն։

ԼԱՎԱԼԻ (Աշխարհագր.)

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 61)

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԿԵՍԱՐ պալատին մօտ.

Կես. Կաց մնա այդրէն, անսա ինձ հէգ և թշուա-ռական, յո՞ գնաս։

Բր. Հեռի 'ի բռնաւորաց։

Կես. (Առ Խրոն) Հապա կալարուք զդա։

Բր. Արդ ազէ տուր վախճան գործոյդ, առ յինէն և զկենաս զայս։

Կես. Կեսար եթէ զայդ կամիր, Բրուտէ, շատ էր ակնարկել միայն, զի և արժանի իսկ ես. չեմք սատ 'ի Փարսալիա. իմա զոր ասեմ, և դու տա-կաւին յանդգնութեան պարծանս համարիս ընդ-դէմ ինձ կքրել. երեսք քո իսկ յայտ առնեն զնիւթեալ չարութիւն սրտիդ, որ և արդ զարամը-տութիւն իմ վառէ բորբոքէ։

Բր. Իմ խորհուրդք հռովմայեցւոյ են. և քեզ, հասանէր լսել՝ եթէ երկնից տուեալ էր։

Կես. Տարայց ապա քոյին ըբութեանդ. լուայց քեզ. ահաւասիկ Կեսար վասն Բրուտոսի 'ի բարձրութենէ իւրմէ խոնարհել յանձն առնու. «տա ապայս» 'ի բաց կացէք դուք յինէն վայր մի. «Նոքա մէկնին». Ազէ տաս, զինչ իցէ որով զիան յանդիմանիցես։

Բր. Զինչ այլ. ահա քեզ երկիր յարիւն թաթա-ւեալ ազգաց օտարաց և քոց հայրենեաց. Հռովմ ըմբռնեալ գերի, պաշարեալ յերկաթ անլոյծ կա-պանաց, և քաջութիւն քո և առաքինութիւն անգամ խառն ընդ խոհերս սրտի քո չարեաց, և արգարութիւն քո չար քան զանիրաւութիւն. որ իբրու շողոմարար ինն շրթամբք փաղաքշէ զՀռովմ 'ի սեր քոյին կապանաց։

Կես. Այդ բոլոր Պոմպէի է, 'ի նմանէ գիւթե-ցար և դու. գոռոզն այն մահառիթ Հռովմայ, նա ուսոյց քեզ զայդ, զի զկեսար իւր բարձա-կից ունել ոչինչ հանդուրժեաց. և կարծես դու թերևս, եթէ նորա յաղթեալ էր ինձ՝ ընդ հէր ազատութիւն Հռովմայ. ա՛հ, ոչ այդպէս, այլ 'ի կապանս սարեաց պղնձեաց խիստ ծառայու-թեան տագնապէր զնա. և Բրուտոս յայնժամ գիւցազն այն վեհ զինչ արդեօք գործէր։

Բր. Բրուտոս յայնժամ մահու խայտառակու-թեամբ զբաւէր զնա։

Կես. Ցայսոնեցան ապա մեքենայք քո՝ զոր և ինձ նիւթես. արդ բանն 'ի վեր եկ. և պարծիս դու դեռ ևս. դեռ ևս կենդանի կացցէ Բրուտոս՝ ինձ 'ի նախատինս։ Արդ ահաւասիկ ես առաջի քո միայնակ անօգնական, ոչ սպասաւոր ոք և ոչ թիկնապահ, ոչ տապար և ոչ սուսեր։

Բրուտ. Թիկունք քաջաց արութիւն իւրեանց, մա-նաւանդ յորժամ առաջի Բրուտոսի անցեալ կան 'ի հանդէս։ Ցանկարծ եթէ էր քեզ երբեք որպէս զսպասաւորսն և զտապարսն մերկանալ 'ի քէն զմտացդ խիղճ, և զտագնապդ երկիւղ։

Կես. Երկիւղ. զայն ձայն ունկն իմ անգամ ոչինչ ճանաչէ, թող թէ սիրտ։

Բր. Անծանօթ ուրեմն էր քեզ այդ 'ի ճակատ մարտի, այլ ոչ նոյնպէս և 'ի քաղաքի ատ-ատ Հռովմայ։ Ոչ ուրուք զարհուրեցուցեալ զբա-զումս՝ եթէ ինքն նախ ոչ սասանեսցի։ Ո՞չ 'ի ձեռս քո է սպանանել զիս այժմիկ, ո՞չ գիտես եթէ ատեամ ես զքեզ, ո՞չ գիտես եթէ ունիմ քեզ լինել խոչ ընդ ոտն 'ի լուսն անօրէն խոր-հրդոցդ. իսկ արդ զնա՞րդ ոչ կորուսանես զիս ատէն առ ետեղ. յայտ իսկ է ապա եթէ զար-հուրեալ դողաս յերեսաց մերոց։

Կես. Անմիտ, միթէ անդ 'ի Փարսալիա ոչ յիմ ձեռս էր կենացդ սահման։

Բր. Իսկ արդ ոչ այժմիկ Բրուտոս այպանէ զքեզ. ազէ զոր յայնժամ կարձնաց երկիւղ, արդ կատարեսցէ բարկութիւն. ահաւասիկ ես, հար թէ կարես զքո ախոյեան. զինչ իցէ որ արդելուցու զքեզ։

Կես. Ա՛հ, բնութիւնն, սիրտ իմ, արիւն իմ, այ անագորոյն։ Ա՛ռ, կարդա, ծանիր զարիւն քո, զքեզ ծանիր. ծանիր զարիւնն, զոր յիս հալա-ծեստես յումմէ՝ գարշիս, յոյր վերայ խիզախեալ ես. և զոր կամիս՝ կատարեա թէ կարես։

Բր. (Ընդ ինքեան լռելեայն) Ա՛հ, վա՛յ ինձ, եղուկ եմ ես. ո՞ւր արդեօք իցեմ, ես. զինչ էր զոր ընթերցայ, զինչ էր զոր տեսի... աչք իմ, խաբե-ցայ արդեօք։

Կես. Արդ զինչ ունիս ասել, որդեակ իմ։

Բր. Հայր իմ է նա. բա՛ի...

Կես. Այո, ես քո եմ հայր, հայր քո եմ. ո՞վ ան-արժան ապաշնորհ, զինչ այդ դժպիսի լուս-թիւն լի ցասմամբ. ընդէր հեծես, ընդէր